1091
L. IV. 6

ԱՒՐՊԱՔԱՊ

ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՒ

ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԵԼԻՔԱՑ

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

1860–1861

Ի ՎԱՍՔՈՒՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՑ

ՃՈՒԱՔԱՂ

ԱՄՍԱԳԻՐ

ԿԲՕՆԱԿԱՆ, ՔԱՆԱՍԷՐԱԿԱՆ ԵՒ ԱՋԳԱՅԻՆ

ԳԻՏԵԼԻՔՆԵՐՈՅ

—

ՀՐԱՏԱՐԱԿԵԱԼ

Ի ՄԵԾՐԱՑ ՄԱԳԻՍՏՐՈՍԷ ՄՍԵՐԵԱՆՑ

ԵՒ

Ի ԶԱՐՄԱՑՐԱՑ ՄՍԵՐԵԱՆՑ

"Կամեցայ Հասկաքաղ լինել՝ ի հունձս
Սրբոցն, և ճոտաղ՝ ի կութս"։
Մովսէս Երզնկացի։

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

ՊՅՃ

Ի ՎԱՍՊՈՒՐԱԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԼԱՋԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՑ։

1860

ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ:

съ тѣмъ, чтобы по отпечатаніи представлено было въ Цензурный Комитетъ узаконенное число экземпляровъ. С.-Петербургъ. 22-го Іюня, 1860 года.

Цензоръ *В. Бекетовъ.*

ВЪ ТИПОГРАФІИ ЛАЗАРЕВСКАГО ИНСТИТУТА ВОСТОЧНЫХЪ ЯЗЫКОВЪ.

ԿՐՕՆԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԵԼԻՔՑ

ՀԱՏՈՐ Բ. ՈՒՅԻ-1860 ՏԵՏՐԱԿ Ա.

ԱՌ ԸՆԹԵՐՑՈՂՍ

«Ա՛ռ գուրս մեր ամենայն մրգաբերք։
Ջնոր առ հնով . . . պահեցի քեզ։
Սաղմոս չԽԷ։

ՆՈՐԱՀԱՍ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ մանկապրեալ վաստակին մեր, զորոյ տպագրութիւնն ի Յունուար ամսոյ այսր 1860 ամի առ ժամանակ մի դադարեցուցած էաք ի քանի մի ստիպող պատճառաց (որպէս ծանուցած եմք առանձին յայտարար թղթով յիւր ժամանակին), այժմ՝ ի նորոյ իւր բաժանորդաց առաջև կանեք, յուսալով թէ այն մանրահասո ձեռն՝ զորս պիտի քաղել ըստ մեծի մասին ի Նայատունկ այգւոյն, ցանկալի և ախորժական լինին (որպէս եղած էին յանցեալ ամի), եթէ ոչ ամենեցուն, գոնէ այնոցիկ՝ որք ըստ բաւականին հմուտ են հայրենական լեզուիս, և ոչ զըլխովին անմասն ի բանաստիրական ուսմանց։

ՆՈՐԱՔԱՂ՝ նկատմամբ հրատարակելի նիւթոց՝ պիտի լինի և յայսմ հետէ ըստ մեծի մասին Ամենայիր Հոգեւոր կամ Արծուաքերական, բայց ոչ ի բաց թողեալ և զայն մասնը՝ որ չէ հոգեւոր։ Հոգեւոր մասին՝ առնելի ընդարձակութիւն տալ կամեցաք վասն երկուց պատճառաց. մի՝ որ կրօնական դիտելիքն՝ զորս հրատարակեցաք յանցեալ ամի՝ առաւել օգտակար համարուեցան ազգիս, և ցանկալի եղեն բազմաց բարեպաշտ ընթերցասիրաց, և այս այնչափ, մինչ զի ոմանք ի նոցանէ այժմ համարեցան նամակօք և յայտնել մեզ զև-

բեանց ընդհակառակութիւնը վասն այնպիսի յօդուածոց· և երկրորդ՝ որ այս մասնս առաւել հարկաւոր է այժմ մեր ազգին, և թուի թէ յամենայն ժամանակս ևս հարկաւոր պիտի լինի՝ նորա յառաջադիմութեան համար դէպ ի կրթութիւն բարուց և ի լուսաւորութիւն մտաց· վասն զի բազմապատիկ փորձովք և անժխտելի ապացուցութեամբք հաստատուած է՝ թէ առաւել քան զամենայն ինչ՝ կրօնն է որ բարւոքում է՝ որպէս զի ուրացանչելի առանձնական մարդոյ՝ նոյնպէս և զամբողջ ազգի կամ ժողովրդի բարոյական վիճակը, կեանքը և այլն· որով և լինում է նոցա իրրև առատաբուղխ և անսպառելի աղբիւր լուսաւորութեան և յառաջադիմութեան ի բարիս: Ուր խնամով իմն ուշադիր լինելով ազգային պատմութեան, տեսանում ենք յայտնապէս՝ որ միայն սուրբ հաւատոյ և սրբազան ծխոյ խորութեան պատճառաւ՝ առաւելագոյն ջանք և փոյթ ունեցած են հանապազ մեր ազգայինքն՝ հոգևորականք և աշխարհականք, զիւրեանց ազգութիւնը ամբողջ և անկորուստ պահպանելու, երբեմն զինուք պատերազմելով ընդդէմ Արիստոտատեաց բռնակալաց և հալածչաց, և երբեմն բանիւ և զրչաւ ընդդէմ զինելով այնպիսի մոլորեցուցչաց, որք՝ ըստ սուրբ Գրոց՝ արժանի են կոչուելու՝ Գայլ յափշտակող՝ հանդերձեալ ոչ խարաց, սուտ մարգարէ, սուտ առաքեալ, սուտ վարդապետ, զոր և նենգաւոր մշակ և ընդ[1], որպիսի էին 14 երորդ դարուսմը Ալնիթոս (Մէթանոզ) անուանեալքն[2], և որպիսի են այժմ մեր ժամանակում նորադանդ քարոզիչքն Լուտերականք կամ Բողոքականք (Փռօթեսթանթ), որոց բովանդակ ջանքն և ցանկութիւնն՝ ևս և յաւուրս պաշտօնն և սովորական գործն և արուեստն՝ ոչ այլ ինչ է, եթէ ոչ ընդ ծով և ընդ ցամաք ճանապարհորդութիւն առնել, քաղաքէ ի քաղաք և գիւղէ ի գիւղ անցանել, տանէ ի տուն մտանել, պէսպէս հնարիւք զանմեղ և զպարզամիտ մարդիկը յազգային և կեղեցւոյ բաժանելով՝ յիւրեանց կէտը ձգել, գողաբար ժողովուրդ ստանալ՝ ոչ միայն ի մեր անտէրունչ ազգէս, այլ և յամենայն քրիստոնէից· և որ ինքնակարագոյն ևս է՝ զսուրբ գրոց բանքը կրճատելով, աղաւաղելով, փոփոխելով, թիւր մեռք և ըստ քմաց մեկնելով, յամենայն տեղիս զիւրեանց մոլորական վարդապետու-

---

[1] Մատ. է. 15: Փիլիպ. գ. 2: բ. Կորն. ժա. 13: բ. Պետ. բ. 1:

[2] Տես ի Շամչ. պատմ. հատ. գ. էջ 326—332. 444—449:

թեանց որոմունքը ցանել՝ ՚ի գայթակղութիւն անմեղաց, որպէս ապացուցած է Հաստատուն բանիւք Աստուածապարգև մեծ Հովսեփեան և Վահանեայական մեր սուրբ եկեղեցւոյ՝ Արբանեակատար Աթոռոլեկոն ՏԵՐ ՄԱՏԹԷՈՍ, իւր «Բաբէ Տէրէ և Բաբէ Տէրէ-նէաչ» մակագրեալ հոդեշահ և խնամատալից գրքի թերթերումը (տես անդ էջ 44. 45. 49. 58. 61—64. 68. 75. 96. 101. 102. 116. 121—123. 129—136, և այլն)։

Հաւատի և աներկբայելի են մեզ ըստ ամենայնի՝ կրօնի ամենամեծ և անհամեմատ ներգործութիւնքն իւրաքանչիւր մարդոյ և իւրաքանչիւր ազգի կամ ժողովրդի վերայ։ Ո՛վ որ ցանկայ խնամել՝ թէ ինչպէս կրօնն կատարեալ է զայս առնել, թող աշխատի նա խնամել նախ՝ թէ ինչպէս հոգին կատարեալ է զմարմինը շարժել և կառավարել։ Խնամատունք վճռած են թէ՝ կրօնն հոգի՝ է հասարակութեան[3]. վասն զի նա ինքնին ներգործում է ժողովրդի հոգւոյ և մտաց վերայ. նա ինքնին վերանորոգումն ընտա. նա ինքնին յառաջնմէ տպաւորումն հասարակայ խնամական կատարելութեան մէջ զայն ճշմարտութիւնքը, որք յետոյ պիտի՝ երևեին արդեամբք։ Ո՛չ երկիրն՝ ուր ժողովուրդն հաստատ է սուրբ հաւատոյ մէջ, բարդաւաճի ամենայն քաղաքական և եկեղեցական բարեկարգութեամբք. և սմին հակառակ, այն երկիրն՝ ուր ժողովուրդն զուրկ է ՚ի հաւատոյ կամ թոյլ է ՚ի հաստատս, ալէկոծի միշտ խռովութեամբք և խանգարի անկարգութեամբք։

Ուրեմն հիմն ունիմք մեք ասելու՝ թէ հարկաւոր է (եթէ ցանկանում ենք արդարև մեր ազգի երջանկութեան) զարթուցանել զամենեցունց ուշադրութիւնը դէպ ՚ի կրօնական խնդիրս՝ մանաւանդ յայնպիսի ժամանակում, յորում այլ օրագիրք և ամսագիրք ՚ի նիւթ առած են իւրեանց՝ զայլատեսակ խնդիրս (օգտաւէտս կամ անօգուտս), և երբ որ մեր ժողովրդի մեծ մասն՝ թէ հոգևորականն և թէ աշխարհական, (յորոց և իցէ պատճառաց) զուրկ է մնացած յայս վերին Աստուածային և Արբանեան գիտութենէ։

Ի սկզբան յօդուածոյս ասացաք, թէ Հռաքայն ՚ի բաց չպիտի թողու և զայն մասնը՝ որ չէ հոգևոր, այսինքն զայլ կենցաղօգուտ գիտելեաց մասնը։ Եւ զայս այնու խոստովանաբար կամեցաք առնել, որ մի՝ գուցէ Հռաքայի նիւթքն՝ միակերպ լինելով միշտ՝ ձանձրութեան պատճառ լինին այնոցիկ՝ որք սովոր են տեսանել մի ամսագրի մէջ

[3] Православ. Обозрѣніе, кн, I. 1860 г.

յօդուածք՝ վերաբերեալք ոչ միայն առ մի դիտումբիւն և խնդիր, այլ առ երկուս՝ երիս՝ չորս և աւելի ևս դիտումբիւնս և խնդիրս:

Ա՝ երջապէս Ա՛ռաքաղն սուրբ պարտականութեանց մինն պիտի լինի յայսմ հետէ (որպէս և էր մինչև յայժմ), ՚ի լոյս հանել զմեր նախնի մատենագրաց պիտանի վաստակոց նշխարքը, ոչք անտիպ մնալով և թաղուած դոլով փոշիների տակ, համարւում էին մինչև յայսօր կամ բնաւ կորուստած և կամ անյայտ: Ամենայն ուղղադատ բանասէր ինքնին կարող է գուշակել՝ թէ որպիսի և որչափի լոյս կարող է ինձանել մեր եկեղեցական, քաղաքական և դպրականական պատմութեանց վերայ, այնպիսի հատուածովք:

Ա՛յսպէս Ա՛ռաքաղն չհեռանալով յիւր իսկական նպատակէն, և յաշխարհիկ լեզուի ոճոյն՝ զոր որոշած էր նա իւրեան ՚ի սկզբան անդ, պիտի շարունակուի այսուհետև այս երէսով հատորովս ՚ի վառս ամենեցուն ՟ օր մերոյ Ս· Գրիգորի Լ՛ուսաւորչի և ՚ի վայելումն լուսաճնունդ հարազատ որդւոց նորա:

ՀՐԱՏԱՐԱԿԻՉՔ

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

Ի ՎԵՐԱՑ ՏՕՆԻՑ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱՇՆԻ:

Ընդհանուր եկեղեցին Քրիստոնէական, վասն պանծացուցանելոյ արժանապէս զՍտուածամօր Աստուծոյ Մարիամու անհամեմատ վսեմութիւնը և զդերազանցութիւնը ՚ի միջի ամենայն Սրբոց՝ ՚ի սկզբանէ անտի սովորութիւն ունեցաւ կատարել ՚ի յիշատակ նորա հինգ մեծահանդէս տօնախմբութիւնք, որք են

Ա· Տօն յղութեան նորա
Բ· Տօն ծննդեան նորա
} Յունուարի:
Գ· Տօն ընծայման ՚ի տաճարն:
Դ· Տօն աւետեաց:
Ե· Տօն վերափոխման*:

՚Ի վերայ այսոցիկ, Երեմիական (այսինքն՝ Լատինական կամ

* Զգիտեմ՝ ինչ է պատճառն, որ Բժշկեան Մինաս վարդապետն իւր ,,Ցայտնաբիւն Աստուածգիտութեան,, գրքումը, փոխանակ հինգ դնելոյ զԱստուածածնի տօնքը, չորս է դնում՝ չյիշելով ամենևին զԱւետեաց տօնը. և գրում է (երէ 342· ըստ երկրորդ տպ·) ,,Սուրբ եկեղեցին չորս տօնախմբութիւն դրեր է Աստուածածնայ՝ յղութիւն, ծնունդ, ընծայումն, և վերափոխումն,,:

Հռոմէական) եկեղեցին վերջին դարերումը յաւելացոյց և այլ երկու մանաւոր տօնախմբութիւնք՝ որք կոչեւմ են՝ ,,Տէն Այթըընեան*, և Տէն Անուան Ս· կոյսին Մարիամու**: Առաջինն ի սոցունց սահմանուած է Յունուարի Ը· պապէն ի 1389 Թուին Վրբիս տոսի, և երկրորդն հաստատուած է նախ ի Լևոն Ժ· պապէն ի 1513 Թուին, և ապա Ինոսկենտիոս ԺԱ· պապէն ի 1681 կամ 1683 Թուին[4]:

Ասի մէջ, որպէս և Յունուար մէջ, կան և այլ երկու մանաւոր տօնախմբութիւնք՝ որք կատարին ի յիշատակ Տէրն, և ի յիշատակ Գոսա Ս· Աստուածածնին[5]:

Ասյս ամենայն տօնից վերայ (այսինքն՝ նախակարգեալ հինգ՝ գլխաւոր, և այս երկու՝ մանաւոր տօնից վերայ) զբոս կատարում է Հայաստանեայց Ս· եկեղեցին ամի ամի յայլևայլ աւուրս (ըստ ցուցանելոյ Տօնացուցին), հարկաւոր եմք համարում՝ առանձին առանձին խօսելով՝ իւրաքանչիւրոյ համար կարևորագոյն տեղեկութիւնք հաղորդել մեր բարեպաշտ ընթերցասիրաց:

Ա·

Տէն Ցղութեան Ս· կոյսին Մարիամու յԱննայէ:

Օգոստոս կուսին Մարիամու Ցղութիւնը յԱննայէ՝ կատարում էին ամենայն Արևելեան եկեղեցիք քրիստոնէից յաւաջին դարուց անտի, ինչպէս յայտնի է թէ ի մեր Տօնացուցէ՝ որ յօրինուած է հինգերորդ դարումը ի մեր Փարպմանչաց, և կարգաւորուած է երկուտասաներորդ դարումը ի ձեռն Ներսիսի Շնորհալոյ, և թէ ի Յունուար Տօնացուցէն՝ որ կարգաւորուած է ի տասներորդ դարումը ի Յովհաննէ Դամասկացւոյ:

Թէ յո՛ր ժամանակում և յո՛ր տեղում սկսուած է սոյնորութիւնն կատարելոյ զայս տօնս, այս բանիս վերայ որոշակի ուսանողուած տեղեկութիւն չկայ: Մեզ պէտ ոմանք համարում են՝ թէ

---

* Այս տօնս կատարւում է ի Լատինացւոց 32 Յունիսի ըստ նոր Տոմարի:

** Տօնս այս յառաջ կատարւում էր ի 22 Նոյեմ. ապա փոխուեցաւ ի 22 Սեպտ: Իսկ այժմ կատարւում է ի կիւրակէին՝ որ անկանի ընդ մէջ ուխտաւորէցն Ծննդեան տօնի Ս· Կուսին, ըստ սահմանադրութեան Ինոսկենտիոս ԺԱ պապի:

4 Տե՛ս ի պատմ. քահանայապետ. Հռոմ. էջ 343: ի Բոլսատր. Շարակ. էջ 23: ի վարս Ս· կուսին Մարիամու տպ. ի Վենետ ի 1812. էջ 61:

5 ի Ճայամա. ի Յոլ. 2. և յՕգոստ. 31:

նախ և յառաջ Սպանիոյ մէջ սկսած են ծանել զՍ· Կուսին յղու-
թիւնը· զոր և աշխատում են հաստատել՝ հայելով ՚ի բանն Ար-
ղեոսի Սպանիացւոյ, որ Ծաղկեցաւ հինգերորդ դարու սկզբում·
սակայն ստուգիւ այս ինչ միայն յայտնի է ՚ի Պատմութենէ, որ Լա-
տինաց կամ Հռովմէական աղգաց մէջ անագան յոյժ յետ բաղում
ժամանակաց (այսինքն ՚ի 1409 թուականին Վրիստոսի) հաստա-
տուեցաւ այս տօնս՝ Ընդքսանդր Ե· պապի սահմանադրութեամբ[6]։

Ա՛ր Հայաստանեայց Ս· եկեղեցին, որպէս և Յունացն, կա-
տարէ զայս տօնս ՚ի 9 Դեկտեմբերի անշարժապէս։ Իսկ Լատինա-
կան եկեղեցին կատարէ ՚ի 8 նոյն ամսոյ՝ ըստ կարգադրութեան
Պղեմէսի ԺԱ· պապի, որ նստաւ յաթոռ ՚ի 1700 թուին Վրիս-
տոսի՚։ Եւ այս՝ կարելի է թէ այնու խորհրդով, որ ինչպէս հե-
թանոսութեան ժամանակներում զԴեկտեմբերի ութերորդ օրը
սովոր էին մատղիկ նուիրել Նեպտունի (Պոսիդոնի)՝ ջրոց կամ
ծովու հաստատածոյն, նոյնպէս և ՚ի քրիստոնէութեան ժամանակին
նուիրեն զայն՝ Աստուածամօր Կուսին, որոյ անունն Մարիամ՝ իբրև
ձայն Լատինական (եթէ արմատն համարուի՝ Մարէ) նշանակէ ծով
կամ ծովային. և իբրև ձայն Ասորի (եթէ արմատն համարուի՝ Մար)
նշանակէ Տէրուհի*։

Մ· ՄՍԵՐԵԱՆՑ

ԳՐԻԳՈՐԻ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ

ԹՈՒՂԹ

՚Ի պապասխանի էրոյ Սարքսի վարդապետի, յորմէ և ողբ ՚ի վերայ Աբասեան
նահանգի[**]։

Զայսպիսի աղէտ տարակուսանաց ընթերցեալ իմ ՚ի քումդ
տառի՝ կրկին կականունն եհաս կուրացելոյ աչացս, տեսանելով

---

[6] ՚Ի գիրն պատկ· տօն· էջ 11։

[7] ՚Ի Վարս Ս· Կուսին Մարիամու· էջ 47։

* Անյապ եւս ըստ Եբրայականին որ է (Մէյրիմ կամ Մէրիամ) թարգմանեն՝ դառն, ըստ որում Մէրա՝ նշանակէ դառնութիւն (տես Եզ· ԺԵ· 23)։ Ոմանք համաձայն Հերոնիմոսի և Եպիփանու՝ թարգմանեն զայս անունս՝ լուսաւոր, պայծառ, լուսաւորեալ, լուսաւորող և այլն։ Ցոր միտ և Շարականն մեր կոչէ զՍ· Կոյսն ,,լուսաւոյսիա դիպին ծնանդ՚՚։

** Տպագրութիւն Թղթոյս եղև բաղդատութեամբ երկուց օրինակաց, յորոց զմին՝ Թերի ՚ի վերջէ ունէաք մեք, և զմիւսն շնորհեաց մեզ պիտանական բարեկամ մեր Ա· Աբրահամեան Տաճօղ· Մ· Մ·

սակաւ ինչ ՚ի վերայ եկեալ անեղբական տառապանս, և յորում մեղադրական բողոք ընկալայ: Եթէ ոչ տայ պատասխանիս, զի՞նչ արդեօք հղծրդ հռետոր և Աստուածայինդ Տիէտոս. միթէ առեայեաճ եղեր ՚ի մէնջ կամ եթէ արհամարհեաճ, զի միանգամ և երկիցս ոչ տայ պատասխանի, որ միշտ կարօտեալ կամ բանի քում և գրի. քանզի հղծր ես և ՚ի պուէտիկոսականն մտաւենագրութեան, և սիրելի ինձ ոչ այլ ինչ, եթէ ոչ այնպիսի լսել ինչ կամ ասել: Սակայն ՚ի բազում տարբերութենէ յուզման մրրկեալ և պտոյտ կեալ պայքարմանցս իբրու ՚ի Պռէմիականն գրէ զնս փոյճութիւնս. քանզի և ոչ այն օտալ յիմմի սերէ, այլ՝ միառուք արեան դոլ, և յայնմանէ մեղկեալ ենք միգարելով, և թողացուցեալ գործարանս բանի և գրոյ և մտածութեան, և զնմիզդ պոռոք և փքացեալ փարթամոյ կարացից ժուժալ, կամ զնոցայն աղէտ ընդ գրով և բանիւ արկանել: Ապա լաւ համարեցայ լուռ լինել՝ որպէս ՚ի հակառակել մեղաւորի առաջի իմ:

Այսպէս գրեալ ՚ի քոյդ Աստուածայինն նամակի սակս ազգայի ապատանութեան, և իբրու ՚ի վերայ աղեաց և արեան դոլովումն, և ողբերգութիւն առեալ դամբանական իմն դիտումն յաղագս մեր, և զոր ՚ի քէն ոչ լուաւ, և որ ոչդ լսէ. և զի ծանեայց զնծորգոյ մեանս թերացեալ ճնացորդս. սիրելի է քեզ բանն իմ սակս սրբանելոյ անձինդ, և զնորագոյնն իբրու չքնաղ և պայծառ պղատոնական: Եւ զի հարկեցեր անհիքաբար համառօտել քեզ, զնմիզդ զայսոսիկ սակաւուք անցանել պարտ վարկայց, թէպէտև ոչ ինձ յայսոսիկ պարապել. տուր ինձ փոքր ինչ խմաստասիրել սակս սիրելոյ քո բանին: Եթէ կամէսցի ոք դեղել զհիւանդոտս՝ որք ՚ի մեռիականն կողաւիթս ջերման և մաստուցանեն սկիով կեղև խստոր խստագոյն ջերման. զի՞նչ, դեղելն դադարեցուցանէ՞, եթէ յուզեալ խօթութեան խեղդէ վաղվաղակի, զոր երբեմն տակալ կարելի էր և երկարել. ապ՝ եթէ մանրեալ և բեկեալ ոսին զջնին հատանեն սրով՝ դեղել զայն կարծելով, կամ սպեղանիս սպանող և մահացուցիչ եղեալ, զի՞նչ, շահ գործիցէ, եթէ կորուստ: Եւ՚կ դու. յորժամ Աղեքսանդրոս զնահացուցիչն կամէր արտաքսել՝ դարձուցանելով կրկին թոյն՝ թաթախեալ ՚ի ժահր, սպանութեան եղև փութացուցիչ:

Ընդ՝ որպէս վարկար վ֊եհդ՝ զնի հղօր ես, զնմիզդ ոք կարասցէ ասել զբոլորն բեկումն բախտին մերոյ բերման. սակայն զայս ան-

զբաւական ՚ի չարիս զեսեղումիւնս տեսանելով՝ հեղձամղձուկ և֊
զեալ տատապիմ: Եթէ արիական այսպիսի այր եգիտ արիութիւն
և մանն մեծանալոյ, եթէ կրօնասիրութիւն և յագուռն խնամոյ, որ
և զնւրն կորոյս կեանս անվթար, եթէ մաքրութիւն մտաց և մակ֊
ատացականութիւն հանճարոյ, եթէ ողջութիւնն առ Տէր, և ո֊
րուն սպասէ, զնմանէ յամառատիս միտով շամանդաղն շռայլեալ·
մի՛թէ և յորժամ բացցին աչք՝ տակաւին կենդանի՛ լնցի, ո՛չ· բայց
այսպիսի առնամոնի վախշ և վարար վեհ ապարեալ յեցեալ վար֊
կանի կենաց գոլ գործի· զնմանէ այսպիսի մտածութեամբ զՀ֊ա֊
միրամեան կարծիս կասկածանաց բերելով՝ յարուցանել դիւին դե֊
զեղով, այս զգողութիւն իբրու ՚ի մոգացն յոմանց եղեալ, եթէ ՚ի
վեհն Վ֊ասդանեան կամաւ զանձն արկանել զինի ցանկութեանն մար֊
մնոյ միտելով՝ ՚ի բացեայ եղև ՚ի բարեացն լըմանել և յԱստուածա֊
յինն սեմոց, որ հաղիւ հասլ համոզեցեալ՝ հուր լինն Աստուածայինն
անկանելով զՀատողն ՚ի բաց քեցեալ՝ արտաքս զայն ՚ի դժուրս կոր֊
զեցեր ՚ի միջոյ ժանեաց և ժահահոտութեան նեխեալ և փտեալ
վիրաց, որպէս ասաց որ ասէ· այժմ ո՛չ սուր, և ո՛չ պահապան, և
ո՛չ զձեռս կարէ կարկառել առ այն՝ որ կարողն է կեցուցանել· վա֊
օրն զի զատելիան Աստուծոյ տեսանելոք ընդ աջմէ և ընդ ահեկէ:
Ասա ուրեմն Դաւիթ ո՛չ դանդաղի· «Դախանձեցայ ես՝ զնաղա֊
ղութիւն մեղաւորաց տեսանելով· օտար եղեն մեղաւորք ՚ի մօրէ»:
Ինձ է ասել «Օ֊ատելիս քո Տէր ատեցի, և ՚ի վերայ թշնամեաց
քոց մաշեցայ» ո՛չ պատկառիմ զորս ոչն ողղմեցաւ՝ հրաստուելով·
ո՛չ նատայց յանթոռս նանրաց, զորս ո՛չ եթող ձեռ և ո՛չ էգ ՚ի ջուր֊
ըրն հոսման: Օ֊այսպիսի եղուզակ յարուցեալ գիտէր հայրենի սէ֊
րըն այն զնոյն ինքն զԻսիւքարն Մադէս կոչեցեալ· որ յառաջ քան
զծայրս արևուն ՚ի վերոյ հասեալ՝ ձերբակալ ապարեալ ածէր յԱր֊
մաւիր, և անդ ուրեմն ՚ի ծայրս աշտարակի պարսպին ցցէր կարթ
ընդ ձախատն վարեալ ՚ի յորմ վարսել հրամայէր՝ ՚ի տեսիլ ան֊
ցաւորացն և եկեղցին առ նա: Իսկ մեր փոխանակ վարսելոյ՝ վերըս֊
տին վհ զնա կացուցեալ՝ վզդովիչ և վատնիչ Հայկեանս նահանգի
պատս վարկանիմք: Վ֊ասն որոյ վայ ՚ի վերայ Հայկեան և Ար֊
մաւեան նահանգի իբրու նուիրական ստգտանք, զորս ասել վուխտա֊
նակի զանփարատելին անիծից ինձ քուրձ:

Որ Յաբէթ, թէպէտ կրտսեր, կորովի:

Որ Յաբետոսթեան յարմարութիւն մտաննց և քաջութիւն:

Ոմն Թէլլասեան թագ և զօրութիւն։
Ոմն Թորգոմեան թեւակոխութիւն։
Ոմն Հայկեան հանդէս և հիացուցանելի գործառնութիւն։
Ոմն Արամեան արմատ և մեծութիւն։
Ոմն Արմայիսեան արութիւն։
Ոմն Ամասեան աստանդօր տեսութիւն։
Ոմն Գեղամեան գեղեցկութիւն։
Ոմն Հարմանեան հոյակապ հիմնարկութիւն։
Ոմն Արամ՝ Արամեան նահապետ։
Ոմն Արայն գեղեցիկ՝ Արտաշատեան կերտացօղ։
Ոմն Անուշաւան՝ անուշահոտն կազմիչ և բարուեաց յարդարիչ։
Ոմն Պարէտ՝ պատուաբեր պերճացեալ։
Ոմն Երբակ՝ արբանեակ բարեաց։
Ոմն Հաւան՝ զօրաւոր զինուած։
Ոմն Փառնակ՝ վառուցի գեղաշուք։
Ոմն Սուր՝ սիրելին և սիրուն։
Ոմն Հաւանակ՝ դիւրահաւան և յօտակ։
Ոմն Վահագնակ՝ որ ըստ անուանն՝ Վահակ։
Ոմն Հայկակ՝ որ ըստ հաւուն իւր՝ հայկակ, որ է հարթակ հաւասար։
Ոմն Ամբակ՝ որ միշտ մանուկ պատանեակ։
Ոմն Առնակ, այսինքն՝ արի այրական։
Ոմն Շահարշ, ըստ Պարսկականին՝ շարիբաշ, միշտ ուրախ թագաւորեալ։
Ոմն Նորայր, վասն զի նոր այրութիւն յուցանէր միշտայարմար զօրութեամբ։
Ոմն Վահամ, սա մեծարուս զօրացն՝ Վահս տամ կոչեցաւ։
Ոմն Կայ, իբրու կատարած բոլորին։
Ոմն Գառակ, սա խիզախօղ՝ ի մարտի և մեծահասին գոռս ունէր։
Ոմն Հրատեակ գեղատիպ։
Ոմն Ընծակ, սա ընծայեալ՝ ի բազմաց ազգայից։
Ոմն Գողակ, սորա գեօղս բազում կերտացեալ։
Ոմն Հօրայ, հզօրացեալ հայրենեօք։
Ոմն Յարմայր, զարհուրելի զօրութեամբ*։

* Օրէն. Արտաշատ. ունի և գյաւելուածդ ։՝ի Հեղինացւոց մեռանի՛։, որ՝ի միում օրինակի դնի՝ի լուսանցն իբրու ծանօթութիւն գրչին։ Ծանօթ. Մ. Մ.

Ոնր Պերճ, պաճուճասէր այլ և սէգ, ի Սանեան* նահանգէ։
Ոնր Ըրբոն՝ բնականագոյն զօրութեամբ։
Ոնր Խազուկ, Ռշնունեան նահապետ։
Ոնր Ձոյ՝ հրաշակերտն տեսլեամբ։
Ոնր Յուսակ՝ յուսացեալ զօրութեամբ։
Ոնր Կայպակ, իբրու կապտօղ զգազում։
Ոնր Սկայորդի, որ և հսկայ էր տեսլեամբ։
Ոնր Պարոյր, առաջինն մեր պատկառոյ։
Ոնր Ձրաչեայ՝ գեղեցկատեսիլ երեսօք։
Ոնր Փառնաւաս՝ փառացի փառասէր։
Ոնր Պաճոյճ, որ բոլորովին էր պատշաճ։
Ոնր Կոռնակ, որ թեկնած էր կռնակաւ, և նահանջէր մարտուցեալ։
Ոնր Փաւոս՝ փառացի, և ըստ Պարսկականին բազմանի։
Ոնր Ձայկակ՝ համանման իւր հաւուն։
Ոնր Երուանդ, որ ի մարտին լինէր անդ։
Ոնր Տիգրան, որ ըստ Պարթևին՝ մեծ և ծանր։
Ոնր Խոր, այսինքն՝ դուռն բարեաց։
Ոնր Տիրան, որպէս Տիգրան, միով պակասեալ գծիւ՝ կրտսեր գոլ նմա։
Ոնր Վահագն, որ և «Երկնէր երկիր», և որ զկնի՝ առասպելին առումն։
Ոնր Առաւան, որ աւերէր զքաղաքս։
Ոնր Նեղսէհ, որ և Գետ յորդ ասացեալ։
Ոնր Օշարէհ՝ զարմացման արժանի։
Ոնր Ըլմոգ՝ Երամեան շառաւիղն։
Ոնր Խայգամ, այլ՝** որ զքաղինան յարդարէր։
Ոնր Վան՝ վանօղն բազմաց։
Ոնր Վահէ, վիհն, և վախճանեալ յայսմ վայրի։
(Ծողից զայնոսիկ՝ որք զկնի այսմ, մինչև ցայս ընդ լծով ծառայեալ, որ և ի մեզ հասանէ տողանի. բայց և ահա ոչ թողից չասել զՊարթևացն պարու)։
Ոնր և Վաղարշակ, քաջ ի քաջացն Խաղալայ։
Ոնր Ըրշակ և Ըրտաշէս։

---

* Գուցե Սկանեան։ ** Ցայլ օրին. Բաֆամաբ։ Ծանօթ. Մ. Մ.

Ո՞վ Տիգրան և Երատաւազդ։

Ո՞վ Երշամ և Երքաթ, կամ Սանատրուկ և Երուանդ, Երատաշէս և միւս Երատաւազդ, Տիրան, Տիգրան, Վաղարշ, և Խոսրով։

Ո՞վ մերն Տրդատ, Խոսրով, Տիրան, Երշակ, Վարազդատ, Երշակ, և վերջինն Վաղարշակ։

(Մնացորդն ի յաջորդ թերթիւ)։

ԳԱՐՆԱՆԱՑԻՆ ԵՐԿՈՑ ԵԻ ԳԻՇԵՐ

ՅԱՑՔԱՔԱՏ

Հին ինչ արեգն աշխարհալոյս
Ի մուտս իւր խոնարհէր,
Երագելով ի գեղեցիկ
Կատարն Հասի ես բլեր։
Նոր տեսարան բացաւ անդէն
Աչաց իմոց յանդիման,
Անհամեմատ պըճնեալ գեղով
Առ ի զարդուց բընութեան։
Նըշոյլք տակաւ ձըգին ի վեր,
Ամպք ոսկետիպ գումարին.
Փայլեն տակաւ ծայրք հին բերդից
Ներքոյ կապոյտ կամարին։
Ի վաղընջուց կանգնեալ դարուց
Դեռ աշտարակք անկործան՝
Ցաղօտն ի լոյս դիմօք տրխուր
Մի մի գան արդ յերևան։
Ընդ ընթանան գետք և աղբերք
Հանդարտ գնացիւք և հեզիկ,
Վըճիտ որպէս ակընվանի,
Երբև բիւրեղ թափանցիկ։
Ցառնեն հովիւք, երգեն քաղցրիկ
Ցեղեղնափող գեղջկական.
Անդ ժողովին խաշանցըն հօտք,
Մայեն անդուլ միաձայն։
Գան անդր և ցոլք, եղինք, արջառք
Ցահել բառաչ շար ի շար,
Գան մերձենան յափրն գետոյ՝
Ըմպել ի ջուրց զովարար։

Ցմուտ ապա մեծ Լուսաւորն
Ցիւրըն ի մայր փութապէս՝
Ամփոփելով համանգամայն
Ըղճառագայթան գեղատես։
Ելին աստեղք յիւրաքանչիւր
Ի խորանաց փայլունակ,
Եւ համասփիւռ տարածեցան
Ընդ կամարաւ կապուտակ։
Անդէն և ջահն գիշերապնաց
Փառօք իւրով ծագեցաւ,
Ըզտրխրականն վանեալ խաւար՝
Որ գայր պատէր շուրջ զերկրաւ։
Ընդ փոխեցաւ համանգամայն
Եւ բընութեան տեսարան,
Նոր իմն գոգցես՝ նոր և չըքնաղ
Զգեցեալ յանկարծ կերպարան։
Է՛ ինչ՝ որ անդ գունակ գունակ
Փայլ արձակէ շողշողուն.
Է՛ ինչ՝ որ աստ սպիտակերանգ
Ի տիպ փայլէ արծաթոյն։
Հայի Լուսին ի ջուրս լըճաց,
Անդ և պատկերն նըկարի.
Հայի ի գետս, անդուստ ի տես
Գայ իբր ընդ ջինջ հայելի։
Ամպք ըսպիտակք և սևաթոյրք
Ցօդոց պընան ի միջի,
Մերթ ըղըստսին պատեն ծածկեն,
Եւ մերթ բանան կըրկնակի։

Մ. Ս.

ՏԱՐԵԳԻՐ

Տեղեկութիւնք ՚ի վերայ շրջանին Հայկայ, և Հայոց Թուականիս: — Կղերիկոսական դպրոց սուրբ Էջմիածնի: — Նոր գիտաւոր աստղ:

—

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

Ի ՎԵՐԱՑ ՇՐՋԱՆԻՆ ՀԱՑԿԱՑ, ԵՒ ՀԱՑՈՑ ԹՈՒԱԿԱՆԻՍ:

՚Ի 1 Նոեմբերի, ՌՅԺ տ.:

Օրս այս՝ ո՛ սիրելի ազգ Հայկայ՝ օր մեծ է քո համար, օր նշանաւոր, օր հանդիսաւոր և փառաւոր քան զամենայն աւուրս. օրս այս՝ ո՛ Հայաստան՝ խրախոյս է կարդում քո զաւակացդ, բանալ ղբերանս ՚ի բարեմաղթութիւն վասն միմեանց. օրս այս՝ ուրախաբեր տարեդարձ է քո ցրուեալ զաւակաց համար, վասն զի այսօր Նաւասարդ (առաջին ամիս)՝ ո՛չ միայն սկիզբն է տարւոյ (որ միշտ, թէ կռապաշտութեան, թէ քրիստոնէութեան և թէ Նահապետաց դարերում տօնախմբուում էր մեծաւ հանդիսիւ), և ո՛չ միայն Տարեմուտ է ազգային թուականի, այլ և օր է յիշատակի մեր ազգութեան, օր յիշատակի հնոյն Հայաստանի ինքնաբաւ հաստատութեան, որ եղև նորա աղատութեամբ ՚ի լռնութենէ Նեբրովթայ կամ Բելայ՝ Ցաբեթի թոռնորդւոյն (այն է՝ Հայկայ՝ մեր նախահօր) դիւցազնական քաջութեամբն:

Ո՛հ՝ այսպիսի օր է այս օրս, ո՛ ընթերցողք, և մի՛թէ մեք վերջինքս ՚ի սերնդոց այն քաջ Աղեղնաւորին՝ որ մեզ ազգութիւն տուաւ, կարող եմք առանձին իմն զուարճութիւն և բերկրութիւն ընդալ մեր սրտից մէջ, մի՛թէ կարող եմք այսպիսի օրում ազգասիրութեան, ընկերասիրութեան և միաբանասիրութեան վերնապարգև զգայմունքները չբևեռել մեր մարմնեղէն սրտից տախտակաց վերայ, և մնալ միշտ անհաւան, ատեցող, բամբասող, զրպարտող և նախատող միմեանց. և վերջապէս մի այսպիսի օր՝ մի՛թէ կարող չէ մեզ — վերջնոցս ՚ի ծննդոց Որդւոյն Թորգոմայ, իրաւունք տալ երկրորդ անգամ սկզբնաւորութիւն առնելոյ մի փոքրիկ ամսագրի, այն է՝ Ճոռոգնէ:

Նմի՛թէ այսպէս, ուրեմն անպատշաճ չպիտի համարուի խօսել տարեգրիս սկզբում այս թուականիս վերայ· որովհետև այս ևս անտարակուսելի է, թէ ամենայն ոք ցանկայ իմանալ՝ թէ մեր ազգային տարին որո՞ն է, ե՞րբ է սկսուած, և ինչո՞վ է նշանաւոր. բայց յառաջ քան զայս հարկաւոր է փոքր ինչ տեղեկութիւն տալ Հայկեան շրջանի և Տարեմտի վերայ:

Մ՚եր հին Տօնարարքը և Ցայսմաւուրք ասում են՝ թէ յետ լեզուաց խառնակութեան ամեն մէկ Նահապետ կամ Ազգապետ Բաբելոնէն դառնալով յայն երկիրն՝ ուստի ելած էր, պատուիրեց իւր հետևողաց տօնախմբել զտարեդարձը յիւրեանց հայրենիքը մնանելոյն: Մեր Հայկ Նահապետն ևս, ասում են, մնաւ Ա՚Այրարատեան աշխարհը կամ յիւր հօր Թորգոմայ

երկիրը՝ Օգոստոսի 11 ին (ըստ ոմանց 13 ին), և Հրամայէց որ նոյն օրն՝ Տարսոյ սկիզբն (Տարեմուտ) Համարուի: Հաստատում են դարձեալ՝ Թէ առաջին անգամ այս Գիւցաղնս եղև որ իւր նորածին ազգին տուաւ տարեցոյց, զոր և պահում է ազգն մասամբ անխոտիոս, ինչպէս որ աւանդուած էր նմա այն նախնական դարուց մէջ:

Այս ասածս կարէ ապացուցուիլ՝ Հայոց սովորական Թուականի մինչև ցայժմ անընդհատ շարունակուելովն. զի Թէպէտ և շատ ճիշդ չէ այն՝ քաղաքական կամ շարժական տարւով (որ միշտ 365 օր է) չափուած լինելոյն պատճառաւ, այլ այսու ամենայնիւ՝ մեզ առիթ մի է ստուգելու զայն (Հայկայ) Թուականը, որոյ վերայ է մեր խօսքն, և գտանելու զայն անուանի շրջանին սկիզբը, զոր Եգիպտացիք Սորիական կամ Շնկան շրջան էին անուանում; և կամ 1461 հաւասրակ և 1460 Յուլեան կամ նահանջաւոր տարիների: Ցիւրաքանչիւր կատարման այս շրջանիս՝ հասարակ և արեգակնային տարիների սկիզբն հանդիպում է ի նոյն օր:

Այս շրջանիս ծանօթ էին և մեր նախնիքն, և անուանում էին զայն Հայկայ Շրջան, ուչ միայն ի յիշատակ այս Քաջիս, այլ մանաւանդ ի նմանէ հաստատուած լինելոյն համար: Երկու ամբողջ Հայկայ շրջանքն անցած են. առաջինն՝ որպէս յառաջ ասած եմք՝ սկսուեցաւ մեր ազգի կազմուԹեան և հաստատուԹեան հետ. երկրորդն՝ լրացաւ՝ զարմանալի՝ բայց և ցաւալի՝ զուգադիպուԹեամբ յայնմ տարւոջ՝ յորում մեր ազգի ինքնակացուԹիւնն կամ ինքնապետուԹիւնն լարձաւ (վերջացաւ), ուան զի Քրիստոսի Թուականին 428 երորդ տարին էր՝ երբ որ Հայկայ երկրորդ շրջանն լրացաւ. և ի նոյն տարին մեր Արշակունեաց ԹագաւորուԹիւնն ևս վերջանալով՝ զրկուեցաւ Հայաստան յիւր ինքնիշխանուԹենէն և անկաւ այլ և այլ տէրուԹեանց տակ: Ցայն դժբաղդ օրէն, այն է՝ յետ վերջանալոյ երկու շրջանաց (2920 տարիների), երրորդ շրջանն պիտի լրանայ յետ 29 ամաց, այսինքն ի 1888 Թուականին Քրիստոսի, և չորրորդն պիտի սկսուի, նոյն տարւոյ Օգոստոսի 11 ին [1]:

Այն Տարեմտի օրս նշանաւոր է մանաւանդ այնու՝ որ մեր ազգն ՀեթանոսուԹեան դարերում՝ տօնախմբում էր նաև զՋրՀեղեղի յիշատակը, ինչպէս մեր օրերում ևս կատարում են շատ տեղ ջրացանուԹեամբ (միմեանց վերայ ջուր սրսկելով) և աղաւնի Թռուցանելով ի տօնի Վարդավառի կամ ԱսլակերպուԹեան. վասն զի մեր սուրբ Հարքն զայս տօնս Հաստատած էին Օգոստոսի 16 ին, յետ 5 աւուրց նոր տարւոյ. և զնոյն օրը մեր Հեթանոս նախնիքն նուիրած էին իւրեանց Աստղիկ Դիւցուհւոյն:*

---

[1] Բազմավէպ, 1860 ամի, տետրակ Ա·

* Այս պաշտուած Դիցուհիս, Թուի Թէ նոյն դուստրն էր, զոր յիշէ Խորենացին (գիրք Ա· գլ· Ը)· զորոյ և զՆուռնդը վարդան պատմիչն՝ ըստ հնագոյն աւանդուԹեան՝ դնէ յետ ջրհեղեղի, գրելով այսպէս. «Զկնի եւիցն ի տապանէն եկաց (Նոյ) այլ եւս չո՛ ամ, և ծնաւ, ասեն, որդի մի այլ՝ Մանիտոն անուն, և դուստր մի՝ Աստղիկ անուն»:

Ոչ թէպէտ այսպէս հանդիսաբար տարւոյն սկիզբն՝ ի Նաւասարդի մէկ՝ հիւրաքանչիւր տարի տօնախմբելու էր Հայաստանի մէջ, բայց թէ ինչ հաշիւ էին պահում մեր նախնիքն՝ այն տարիների դումարման (այսինքն՝ թուական) մասին, զայս ևս՝ որքան կարելի իցէ՝ արժան է քննել։

Որ ազգային պատմութեան ուշադիր լինելով, չեմք գտանում այնպիսի թուական՝ որ սկսուած լինի ի Հայկայ նշանակուած տարեմտէն. այլ գտանում եմք մի թուական՝ որ ըստ հաւանական կարծեաց՝ Մարաց և Բաբելացւոց թուականի հետ ի միասին սկսուած է, 743 տարւով յառաջ քան ըզքրիստոս, երբ որ մեր պարոյր նահապետն արքայական թագիւ պսակուեցաւ։ Այս թուականիս տարին՝ ի սկզբանէ անտի՝ էր արեգակնայինն. բայց նորա ընթացքը արեգական (երկրի) ընթացից հետ հաւասար պահելոյ համար՝ զգուշաւոր կարգ ինչ էր սահմանուած. վասն զի միայն երկրի ընթացից 365 ամբողջ օրն հաշուում էր, իսկ վեց ժամն՝ որ յիւրաքանչիւր տարւոյ յաւելանում էին՝ հաշուի տակ չէին անկանում (այսինքն ոչինչ չէին համարւում)։ Տարին բաժանուած էր ի չորս և երկու հաւասար ամիսս, որոց իւրաքանչիւրն ունէր 30 օր, և ամենքն ի միասին՝ անում էին 360 օր. ուստի զայս թիւս՝ արեգակնային ամբողջ տարւոյ (այսինքն 365 աւուրց) հաւասարելոյ համար, յաւելացուցին և այլ ամիկ մի երեքտասաներորդ՝ Անէքջոյ անուամբ, որ ունէր 5 օր միայն։ Այսպէս ամենայն տարի միօրինակ և հաստարակ էր, նահանջ տարի չկայր։ Տարին սկսում էր ի Նաւասարդ ամսոյ, որ էր՝ որպէս ասացաք՝ առաջին ամիս։ Զայս մեր երեքտասան ամսոց անուանքը և կարգը կարեն տեսանել ցանկացողք Հայերէն օրացոյցների մէջ. բայց այս տեղ ևս նշանակել աւելորդ չեմք համարում, որ է այսպէս.

1· ՆԱՒԱՍԱՐԴ*.	5· ՔԱՂՑ·	9· ԱՀԵԿԱՆ·	13· ԱՒԵԼԵԱՑ։
2· ՀՈՒՒ**.	6· ԱՐԱՑ·	10· ՄԱՐԵՐԻ·	
3· ՍԱՀՄԻ***.	7· ՄԵՀԵԿԱՆ·	11· ՄԱՐԳԱՑ·	
4· ՏՐԷ·	8· ԱՐԵԳ·	12· ՀՐՈՏԻՑ·	

Այսպէս ահա Հայոց տարին չունելով ամենևին նահանջ, հիւրաքանչիւր չորս տարում՝ մի օրով յառաջ է գնում քան զՁուկաց և զՀռոմայեցւոց տարին՝ (երբ որ ըստ նոցա՝ նահանջ է տարին, 366 օրով)։ Լաւ ևս պարզաբանեմք զայս։ Եթէ Հայոց Տարեմուտն՝ կամ Նաւասարդի մէկն՝ Հանդիպի Օգոստոսի 18 ին (որպէս Հանդիպում է յայսմ 1860 ամի) յետ չորս տարւոյ, այսինքն ի 1864 ամի (որ ըստ Հռոմայեցւոց նահանջ տարի է, 366 օրով) չՀանդիպիլիր դարձեալ Օգոստոսի 18 ին, այլ՝ մի օրով յառաջ, այսինքն ի նոյն ամսոյ 17 ին։ Նոյնպէս և յետ այլ ևս 4 տարւոյ,

---

* Ըստ ոմանց ստուգաբանի Նաւ հաս արտ, և ըստ ոմանց՝ Նաւասարտ։ Երկուքն ևս պատշաճաւոր են՝ ի յիշեցուցանել զՆոյեան տապանի ի Հայաստան իջանելը։

** Օ՛ր՝ Վրացերէն նշանակէ երկու. և առ մեզ՝ է երկրորդ ամիս։

*** Սահ՝ Վրացերէն — երեք. և առ մեզ՝ է երրորդ ամիս։

այսինքն յամին 1868, մի օրով յառաջանայ դարձեալ Հայոց տարւոյ սկիզբն, և Հանդիպի ՅՕգոստոսի 16: Եւ ըստ այսմ կարգի յետ 120 ամաց (այսինքն ՚ի 1984 ին) մի ամբողջ ամնով պիտի յառաջանայ Հայոց Տարեմուտն կամ Նաւասարդի մեկն, և պիտի Հանդիպի ՚ի Յուլիսի 18. իսկ յետ 1460 տարւոյ (այսինքն ՚ի 3320 ամի) դարձեալ ՅՕգոստոսի 18 ին պիտի Հանդիպի Նաւասարդի մեկն, և մի ամբողջ տարի պիտի յաւելանայ Հայոց Թուականի վերայ:

Ով ինչ Թուական գործ էին ածում մեր նախնիքն յառաջ քան զՔրիստոս, և ա և յետ Քրիստոսի մինչ ցՀայոց Թուականի դրուիլն, այս խնդրոյս վերայ չունիմք տեղեկութիւն մեր Հեղինակաց գրուածոց մէջ: Իսկ Հայոց Թուականի Հաստատուիլն՝ ըստ աւանդելոյ մեր ազգային պատմչաց, այն է՝ Յովհաննու Կաթողիկոսի, Սամուէլի, Վարդանայ, և այլոց, եղև այսպէս:

Ի դ դարու կիսում, Մովսէս Բ. Կաթողիկոսն Եղուարդեցի, իւր Հայրապետութեան առաջին տարում (յամի Տեառն 551), կամելով զՀայոց Տոմարը ուղղել և նորոգել, Դուին քաղաքում (ուր էր յայնժամ Աթոռն Հայրապետական) ժողով գումարեց յեպիսկոպոսաց և յիմաստուն մարդոց՝ որք Հմուտ էին Աստեղաբաշխութեան և Տոմարագիտական արուեստի, և նոցա օգնականութեամբ՝ նոր Թուական և Տոմար Հաստատեց, ընդունելով յանխախտ գործածութիւն այն Աստեղաբաշխական շրջանը՝ որ ՚ի Տօմարագիտաց կոչւում է Մեծ Շրջան, Շրջան Հինգհարիւրամեայ կամ Հինգհարեակ*, որով Զատկի և այլ տօնից օրերն կարգաւորուեցան: Յետ այնորիկ Հայք սկսան ՚ի գործ դնել ղայս Թուականս, որ սկսուեցաւ ՚ի յաջորդ ամին, այն է՝ ՚ի 552 Թուականին Քրիստոսի ՚ի Յուլիսի 11 (ըստ Յուլեան Տոմարի):

Իսպ որովհետև՝ այս Թուականս նահանջ տարի չունելով՝ յիւրաքանչիւր չորրորդ տարին մէկ օրով յառաջ էր խաղում, այսու պատճառաւ յերկուտասաներորդ դարումն Յովհաննէս — Սարկաւագ վարդապետն մեր ՚ի նորոյ զննելով զՀայոց Տոմարը, և տեսանելով զայն միօրեայ տարբերութիւնը Հայոց տարւոյն ՚ի Հռովմայեցւոց տարւոյն (որ կարող էր ժամանակաւ շատ շփոթութեանց առիթ տալ) վերստին կարգաւորեց զայն, և սահմանեց նոր Նկեղեցական տարի՝ չորս տարին մի անգամ նահանջաւոր, զՏարեգլուխը կամ զՆաւասարդի մեկը դնելով անշարժապէս ՅՕգոստոսի 11 ին**, Այսու պատճառաւ այս վերջին Տոմարս կոչի Անշարժ կամ Անխոտոր, որպէս և հինն՝ Շարժական. և տարին ևթէ հաշուի ըստ անշարժ Տոմարի,

---

* Զայս շրջանս՝ որ է 532 ամաց, յօրինած էր նախ Վիկտորիոս Ակուիտանացին յամի Տեառն 463. և ապա աւելի ըստ կարգի Հանդիսացոյց Իսա Աղեքսանդրացի երևելի աստեղաբաշխն:

** ,,Մեծ իմաստն գիտութեամբ քան զյոլովս և Հանճարեղն յամենայնի՝ մտահարուստն Յովհաննէս, Սարկաւագն կոչեցեալ, ՚ի Չաղբատ . . . զհաստատ և զանշարժ տումարն կարգեաց փոխանակ շարժականին և անհաստատանոյն (Նիւռխ. էջ 63):

կոչի Եկեղեցական կամ Յայսմաւուրքայ տօրէն. իսկ եթէ հաշուելի ըստ շարժական Տոմարի, կոչի Քաղաքական:

Զհայոց Թուականը գտանելոյ համար՝ հարկաւոր է՝ի քրիստոսի Թուականէն հանել 551, և մնացեալն ցուցանէ ղհայոց Թուականը. զոր օրինակ յայսմ ամի քրիստոսի Թուականն է 1860, յորմէ եթէ հանուի 551, մնացեալն՝ 1309 է հայոց Թուականն, որ վերջացաւ յերեկեան աւուր (այն է յՕգոստոսի 17 ին), և այսօր (յՕգոստոսի 18) սկսուեցաւ ՌՑԺ (այսինքն 1310) երորդ տարին:

Ընդ այս Թուականս սկսուեցաւ գործածուիլ աղգիս մէջ՝ի նոյն իսկ հաստատուած ժամանակէն, և այնուհետև հասարակ սովորութիւն եղև աղգայինն մատենագրաց՝ զայս Թուականս նշանակել իւրեանց գրուածոց մէջ: Եւ թէպէտ երբեմն ըստ պահանջելոյ հարկին կամ՝ ըստ պատշաճութեան բանին՝ գործ ածուի էին նոքա և այլ Թուականք, որպիսի են. Աշխարհի արարչութեան Թուականն՝ ըստ Եօթանասնից, կամ ըստ Աւրիկանոսի. Հռովմայ շինուելեան Թուականն, որ կոչուի էր Հռոմոյ Թուական. որպէս ապա և քրիստոսի հասարակ Թուականն, և այլն. սակայն նոյն Թուականաց հետ՝ զնախայիշեալ Թուականը ևս կցորդուի էին՝ նշանակելով կամ Թուական անուամբ և կամ Թուագրերով**:*

Ընդ այժմ մեր օրերում թէև նուազեալ է գործածութիւնն այս աղգային Թուականիս, բայց բոլորովին խափանուած չէ, այլ գործ է դրուի ոչ միայն յեկեղեցական մատեանս և՝ի կոնդակս Հայրապետաց, այլ և յամենայն գրուածս Հայոց Հոգևորական ատենից՝ի Ռուսաստան: Ահա եղև ըստ յատուկ հրամանի՝ի Տէր Հանգուցեալ երջանկայիշատակ Տէր Ներսէս Ե. կաթողիկոսի ամենայն Հայոց. որ փոյթ մեծ ունելով նորոգելու և անկորուստ պահպանել տալու զայն ամենայն՝ որ կալող էր յիշատակարան Համարուիլ ազգային հնութեանց և փառաց, իւր առանձին կոնդակաւն պատուիրեաց ամենայն Հոգևոր ատենից աղգիս՝ յիւրեանց գրուածոց մէջ զկնի Փրկչական Թուականի՝ դնել և զԱզգայինը:

ՋԱՐՄԱՑՐ ՄՍԵՐԵԱՆՑ·

---

* Արարչութեան աշխարհի Թուականն ըստ Եօթանասնից՝ տեսանի՝ի գրուածս Վարդան վարդապետի, Շնորհալւոյ, Սարկաւագ վարդապետի, Սամուէլի երիցու, և առաւել՝ի Տոմարագիրս: Նոյն Թուականն՝ ըստ Աւրիկանոսի տեսանի՝ի գրուածս Ցովհ. կաթողիկոսի, Ստեփ. Ասողկայ, Շնորհալւոյն, Սարկաւագ վարդապետի, Սամուէլի երիցու, և այլն:

** Տե՛ս զայսմանէ՝ի Հ–ոտոն 1859 ամ. էջ. 15:

ԿՂԵՐԻԿՈՍԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ

(Ի Նոր-Նախիջեւան)

Սուրբ Էջմիածնի դպրոցն այժմ բաւական բարեկարգութեան մէջ է շնորհիւ Նորին Վեհափառութեան Տեառն Մատթէոսի սրբազան Հայրապետին մերոյ։

Թոլանդակ աշակերտներն առ այժմ քառասուն և չորս են, բայց սովորաբար ուսումնարանի որդեդիրքն ոչ աւելանան քան զյիսուն, և ոչ պահասին քան զքառասուն, և ըստ կանոնադրութեան Սիւնհոդոսին Էջմիածնի՝ պարտին նոքա կամ քահանայ լինիլ կամ վարդապետ։ Այժմ մեծ փոյթ ունին յառաջադիմութեան թէ վարժապետներն և թէ աշակերտներն։ Ցուսով եմք և մեք, որ ըստ աշակերտաց գովելի ջանասիրութեան, յուսալի մարդիկ ելանեն յայս դպրոցէս։

Լեզուք են՝ Հայերէնն և Ռուսերէնն։ Ուսուցիչք են՝ հինգ· երեքն՝ Հայոց լեզուի, և երկուքն Ռուսաց։

Հայոց լեզուի աւագ ուսուցիչ է Թադէոս Վարդապետեան Զիւնական։ Երկրորդ՝ Գրիգոր Վարդապետեան Ափխազեանց. և երրորդ՝ Աւագ Սարկաւագ Աւետիքն Խաչատրեան։

Ռուսաց լեզուի աւագ ուսուցիչ է Պ. Կարապետեան Սանասարեանց, և երկրորդ՝ Պ. Պետրոսն Շահինեանց, որ այժմ բացակայ է վասն ինչ սեփական գործոց, և զնորա պաշտօնը կատարումէ Պ. Սանասարեանցն։

Դասատունքն երկու են։

Ուսանելի առարկայք յառաջին դասատան՝ են

ա. Հայերէն ընթերցանութիւն և վայելչագրութիւն։

բ. Առաջին մասն քրիստոնէական վարդապետութեան։

գ. Առաջին մասն քերականութեան։

(Սոցա ուսուցիչն է Ս. Ա. Խաչատրեանց)։

դ. Երաժշտութիւն։

ե. Աշխարհագրութիւն։

(Սոցա ուսուցիչն է Գ. Վ. Ափխազեանց)։

զ. Ռուսերէն ընթերցանութիւն և վայելչագրութիւն։

է. Թուաբանութիւն։

(Սոցա ուսուցիչն է Պ. Պ. Շահինեանց)։

Յայսմ դասատան են աշակերտք 25։

Առարկայք երկրորդ դասատան են

ա. Հայերէն քերականութիւն և ճարտասանութիւն։

բ. Քրիստոնէական վարդապետութիւն։

(Սոցա ուսուցիչն է Թ. Վ. Զիւնական)։

գ. Աշխարհագրութիւն։

դ. Երաժշտութիւն և Հայերէն վայելչագրութիւն։

(Սոցա ուսուցիչն է Գ. Վ. Ափխազեանց)։

Ե. Ողորմելին ընթերցանութիւն և վայելչագրութիւն։
Զ. Երգեցողութիւն։
Է. Թուաբանութիւն։
(Սոցա ուսուցիչն է Պ. Կ. Սանասարեանց)։

Այսմ դասատան աշակերտք են 19։

Ի երատեսուչ դպրոցին՝ է Գրիգոր Եպիսկոպոսն Յովհաննց, Անդամ Սինհոդոսին Էջմիածնի. իսկ առանձնական վերակացու՝ է Ծերունազարդ Յարութիւն վարդապետն Համազասպեան։

Խաչատուր Ս· Բաբայեան։

ՆՈՐ ԳԻՍԱՒՈՐ ԱՍՏՂ։

Ի նախընթաց Յունիս ամսեան երևեցաւ երկնքի վերայ նոր գիսաւոր աստղ, որոյ վերայ Պ. Իվէն Վիլարսօ, որպէս գրում են լրագիրք, արած է երեք զգուշաւոր և ճիշդ դիտողութիւնք, որք ցոյց տուին՝ թէ այս նոր գիսաւոր աստղս չէ այն, որ երևեցած էր ի 1556 թուականին, որպէս բազումք կարծեցին։ Գուշակութիւնք պակաս չեղեն և այս անգամ, որպէս լինում են միշտ գիսաւոր աստեղաց երևման ժամանակին, մանաւանդ այնու պատճառաւ, որ կարծեցին (որպէս ասացի) թէ այս՝ այն աստղն է՝ որ երևեցած էր ի 1556 թուականին, յորում մեծամեծ յեղափոխութիւնք եղեն և բազում անդք անցին։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Պայմանք բաժանորդութեան Հառաջիկ։

ՀՈՒԱՔԱՂՆ պիտի լինի ի տարին 24 տետրակ, տպուելով երկու շաբաթը մի անգամ մի մի տետրակ՝ ի մի ուրճածալ թերթիկ։

Տարեկան գինն է 3 ռուբլի արծաթ կանխիկ վճարելի թէ Մոսքուայի մէջ և թէ այլ քաղաքներում։

Խաժանորդ գրուիլ կարելի է ամենայն ժամանակ, և գրուողն ունի ստանալ սոյն տարւոյ առաջին անոյ տետրակքը ամբողջ։

Հառաջիկ Հրատարակչաց մօտ վաճառի նաև

ՀՈՒԱՔԱՂ։ Ամսագիրն բանասիրական, Հատոր Ա· 1859 ամի. գինն 4 ռուբ. արծ. կանխիկ վճարելի թէ Մոսքուայի մէջ և թէ այլ քաղաքներում։

ՀԱԻԱՏԱՊԱՏՈՒՄ, այն է Մանր ուսմունք քրիստոնէական Հաւատոյ, ի Մսերայ Մոպիստրոսէ Մսերեանց. երկրորդ տիպ՝ Հանդերձ յաւելուածով կարևորագոյն աղօթից. գինն Մոսքուայի մէջ 25 կոպ. արծ.

Исч. поз. С. П. Б. 22 Іюня 1860 г. Цензоръ В. Бекетовъ. Въ Тип. Лаз. Инс. вос. яз.

ՀՐԱՏԱՐԱԿԻՉՔ Մ· ՄՍԵՐԵԱՆՑ և Զ· ՄՍԵՐԵԱՆՑ